ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հունիսի 2024 թվականի №-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի №448Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի դեկտեմբերի 3-ի №448-Ա որոշմամբ «ՄՈԼԲԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրվել է Լոռու մարզի Ստեփանավան համայնքի վարչական տարածքում՝ Ձորագետ գետի Չքնաղ վտակի վրա, 961 կՎտ հաշվարկային հզորությամբ «Ստեփանավան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0568 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0568 լիցենզիա)՝ մինչև 2033 թվականի դեկտեմբերի 15-ը գործողության ժամկետով, որից մինչև 2023 թվականի դեկտեմբերիի 15-ը կառուցման ժամանակահատված, որը 2023 թվականի դեկտեմբերի 13-ի №427-Ա որոշմամբ երկարաձգվել է տասնվեց ամսով՝ մինչև 2025 թվականի ապրիլի 15-ը,

բ) Ընկերությունը 2024 թվականի մայիսի 29-ի №ՄԲ-02 գրությամբ դիմել է Հանձնաժողով ԼԷ №0568 լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու համար,

գ) «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի գործունեության լիցենզիան կարող է դադարեցվել լիցենզավորված անձի դիմումի համաձայն,

դ) Հանձնաժողովը 2024 թվականի մարտի 13-ի №68-Ա որոշմամբ՝ 2023 թվականի դեկտեմբերի 13-ի №427-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երաշխիքը

չներկայացնելու համար կասեցրել է ԼԷ №0568 լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը,

ե) «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի՝

- 2-րդ մասի համաձայն, ի թիվս այլնի, Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում երաշխիքային գումարը Հանձնաժողովի սահմանած կարգով և չափով ենթակա է փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,
- 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում հանձնաժողովի կողմից երաշխիքային գումարը (լրիվ կամ մասնակի) պետական բյուջե փոխանցելու վերաբերյալ որոշման ընդունման պարագայում, եթե լիցենզավորված անձը նախկինում հանձնաժողով երաշխիք չի ներկայացրել, ներկայացրած երաշխիքի գործողության ժամկետը լրացել է, և (կամ) դրանով ամրագրված (դրա շրջանակում առկա) գումարի չափը չի բավարարում նույն որոշման պահանջի ամբողջական ապահովման համար, ապա նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գումարի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պարտավորությունն ամբողջությամբ կամ չբավարարող մասով կրում է լիցենզավորված անձը,

զ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի՝

- 3-րդ կետի համաձայն՝ երաշխիքով սահմանման ենթակա գումարի հաշվարկման բազա է համարվում «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված բազային տուրքի չափը: Երաշխիքով սահմանման ենթակա գումարի մեծությունը պետք է հավասար լինի կառուցվող կայանի, իսկ կայանի վերակառուցման դեպքում դրա արդյունքում ավելացող հաշվարկային (տեղակայվող) հզորության (արտահայտված կիլովատտերով) և «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված բազային տուրքի երկուսուկեսապատիկի արտադրյալին, սակայն ոչ պակաս, քան 500 000 դրամը,
- 6-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարն ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե որոշում է ընդունել արտադրության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին, բացառությամբ

Կարգի 46.1-ին կետի համաձայն լիցենզիայի տրամադրման մասին որոշումն ուժը կորցրած ճանաչելու դեպքի,

- 9-րդ կետի համաձայն՝ Կարգի 6-րդ կետով նախատեսված որոշման ընդունման դեպքում, եթե լիցենզավորված անձի կողմից նախկինում Հանձնաժողով երաշխիք չի ներկայացվել, ներկայացված երաշխիքի գործողության ժամկետը լրացել է կամ դրանով ամրագրված (դրա շրջանակում առկա) գումարի չափը չի բավարարում նույն որոշման պահանջի ամբողջական ապահովման համար, Կարգի 6-րդ կետով նախատեսված գումարի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պարտավորությունն ամբողջությամբ կամ չբավարարող մասով կրում է լիցենզավորված անձը,

է) Ընկերության ներկայացրած «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության 2022 թվականի հուլիսի 15-ի №01-722 գրությամբ №2205185856 բանկային երաշխիքի գործողության ժամկետն ավարտվել է 2024 թվականի հունվարի 29-ին և Հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 13-ի №427-Ա որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված երաշխիքը չի ներկայացվել, Կարգի 6-րդ կետով նախատեսված գումարի՝ 2 402 500 (երկու միլիոն չորս հարյուր երկու հազար հինգ հարյուր) դրամի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցման պարտավորությունը կրում է Ընկերությունը, և

հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետը և 9-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 3-ի «ՄՈԼԲԵՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ստեփանավան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №448Ա որոշումը:
2. Պարտավորեցնել Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում 900005028130 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել 2 402 500 (երկու միլիոն չորս հարյուր երկու հազար հինգ հարյուր) դրամ գումար:

3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ այն ստանալու պահից տասնհինգօրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը, բացառությամբ՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքով նախատեսված դեպքի:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
հունիսի 2024թ.